## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**30.03.2018թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱԾՁԲ-18/3 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

ք. Երևան

23 մայիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն /այսուհետ կոմիտե/, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աբակ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով 30.03.2018թ. կնքված թիվ ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԳՀԱԾՁԲ-18/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 կետով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի շրջանակներում կատարել նորոգման աշխատանքների լրացուցիչ ծավալների ավելացում համաձայն Ծավալաթերթ-նախահաշվի.

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Շինարարական աշխատանքներ** | | | | |
| | **Քանդման եւ ապամոնտաժման աշխատանքներ** | | | | |
| 1 | Ցեմ.ավազե նախաշերտի իրականացում 30մմ հաստ | մ$^2$ | 350 | 1.45 | 507.5 |
| 2 | Պատերի գաջե սվաղում բարելավված որակի | մ$^2$ | 97 | 2.5 | 242.5 |
| 3 | Առաստաղի գաջե սվաղում բարելավված որակի | մ$^2$ | 87 | 2.98 | 259.26 |
| 4 | ППВ-2x2.5մմ$^2$ հատվածքով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գծ/մ | 120 | 0.58 | 69.6 |
| 5 | ППВ-2x4մմ$^2$ հատվածքով, հաղորդալարի անցկացում սվաղի տակ | գծ/մ | 55 | 0.74 | 40.7 |
| | *Ընդամենը* | | | | 1119.56 |
| | *Շահույթ 10%* | | | | 111.96 |
| | *Ընդամենը* | | | | 1231.52 |
| | *ԱԱՀ 20%* | | | | 246.30 |
| | *Ամբողջը* | | | | 1477.82 |

1.2 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 908940 (ինը հարյուր ութ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.3 Սույն Համաձայնագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվում համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետը: Սույն համաձայնագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով.

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Երևանի տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքներ (լրացուցիչ ծավալներ) | Համաձայնագրի հաշվառման պահից սկսած | Մեկամսյա ժամկետ |

1.4 Հաստատել Երևանի տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքների վճարման ժամանակացույցը.

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Աշխատանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/բ համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | |
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/3 | Երևանի տարածքային ստորաբաժանման արխիվային տարածքի նորոգման աշխատանքներ (լրացուցիչ ծավալներ) | 908940 | 908940 | 908940 | 908940 | 908940 | 908940 | 908940 | 908940 | 908940 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց պող. 7
հ/հ 900013220026
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար
Վ. Համբարձումյան ------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Աբակ» ՍՊԸ
Հասցե՝ Սիլիկյան թաղ. 1փ. 20տ
ՀԷԲ Ծահումյան մ/ճ
Հ/Հ 163028028518
ՀՎՀՀ 01222825

Տնօրեն
Ա. Սարգսյան ------------------------
/ստորագրություն/
Կ.Տ